



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

### **ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ**

#### **ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան

28 օգոստոսի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Դիլանյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Սերգեյ Գրիգորյանի  
անհատական դիմումի ընդունելիության հարցը,

### **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Սերգեյ Գրիգորյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարանում մուտքագրվել է 2019 թվականի օգոստոսի 14-ին)՝ խնդրելով.

«Որոշել Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 123-րդ 1-ին և 110-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթների՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 60 (1, 3, 4-րդ մա-

սեր)-րդ հողվածներին, 61-րդ հողվածի 1-ին մասին, 63-րդ հողվածի 1-ին մասին համապատասխանության հարցը»:

2. Դիմողը բարձրացնում է օրենքի բացի խնդիր՝ վկայակոչելով օրենքի բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները: Ըստ դիմողի՝ օրենքի բաց առկա է, երբ տվյալ դեպքում վարչական ակտի իրավաչափության՝ վարչական և դատական կարգով ստուգման գործընթացի իրացման հնարավորությունն ապահովելու համար օրենսդիրը չի նախատեսել կարգավորումներ, որոնք կբացառեն վարչական ակտի՝ վարչական և դատական կարգով բողոքարկման ընթացքում իրավահարաբերությունից ծագող պարտավորությունների կատարման կասեցումը՝ այդպիսով չապահովելով անձանց իրավունքների պաշտպանության իրական հնարավորության երաշխիքներ:

Դիմողը գտնում է, որ վարչական դատարանում գործի քննության ժամանակահատվածի, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման դեպքում՝ բողոքարկման գործընթացի ամբողջ ժամանակահատվածի համար մաքսավճարի հաշվարկը շարունակելը և իր վրա համապատասխան չափով գույքային պատասխանատվություն դնելը անհամաչափորեն սահմանափակում են իր՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացումը, քանի որ դատաքննության և բողոքարկման գործընթացներն իր համար ուղղակիորեն զուգորդվում են գույքային այնպիսի հետևանքներով, որոնք արգելակող ազդեցություն ունեն վերոգրյալ իրավունքների իրականացման վրա:

Դիմողը բարձրացնում է նաև վիճարկվող դրույթների իրավական անորոշության խնդիր, սակայն, այն պայմանավորում է վերը նշված օրենքի բացով:

3. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ.

1. Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանա-

դրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության, ինչպես նաև լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոններն ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և Օրենքով նախատեսված) գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Հետևաբար, դիմողը Սահմանադրական դատարանում պարտավորված է կատարելու այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է **Սահմանադրության 2-րդ գլխում** ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Սահմանադրական նշյալ նորմի հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով մանրամասնվում և կանոնակարգվում են անհատական դիմումին ներկայացվող սահմանադրական և օրենսդրական պահանջները: Դրանց սահմանումն ինքնանպատակ չէ և միտված է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացման ապահովմանը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը կրկնում է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի նորմը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ

մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, **և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝** հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է,** կամ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

2. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ այն չի պարունակում Սահմանադրության 60-րդ հոդվածում ամրագրված իրավունքների ենթադրյալ խախտման առնչությամբ որևէ հիմնավորում: Ինչ վերաբերում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներում ամրագրված իրավունքների ենթադրյալ խախտումների առնչությամբ դիմողի փաստարկներին, ապա դրանք հիմնավոր չեն, քանի որ գույքը մաքսային մարմնի պատասխանատու պահպանությանը հանձնելու համար նախատեսված մաքսավճարի առկայությունը կամ բացակայությունը որևէ տրամաբանական, օրգանական և գործառնական կապի մեջ չի գտնվում դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների հետ, չի սահմանափակում կամ խոչընդոտում այդ իրավունքների իրացումը: Ասվածի վկայությունն է նաև այն հանգամանքը, որ դիմողի գույքի՝ պատասխանատու պահպանության ներքո գտնվող ողջ ժամանակահատվածում յուրաքանչյուր օրվա համար մաքսավճարների կուտակման պայմաններում դիմողն, այնուամենայնիվ, առանց խոչընդոտի օգտվել է դատական պաշտպանության և արդար դատաքննության իր իրավունքներից:

Ձևականորեն բարձրացնելով իրավական նորմի սահմանադրականության հարց՝ դիմողն իրականում հետապնդում է այլ նպատակ, այն է՝ հետ ստանալ գույքի պատասխանատու պահպանության համար իր կողմից արդեն իսկ վճարված մաքսավճարի գումարը, ինչը դիմումը դարձնում է ակնհայտ անհիմն:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

Սերգեյ Գրիգորյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող  
Անդամներ՝



28 օգոստոսի 2019 թվականի  
ՍԴԴԿՈ- 46